ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ Ռ.ՕՅՐԻՆԳԵՐԻ «ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ 1933» ԹԻՆԳՇՓԻԼՈՒՄ

ԳՈՀԱՐ ՓԱՆՈՍՅԱՆ

Հոդվածի նպատակն է Ռ. Օյրինգերի «Գերմանիայի չարչարանքները 1933» (1933) թինգշփիլի օրինակով ցույց տալ Առաջին համաշխարհային պատերազմի զոհերի նշանակությունը նացիստական վարչակարգի համար: Ինչպես նաև հասկանալ, թե ինչ գործառույթ են կատարում «զոհաբերության գործողությունը» և «մահացածների պաշտամունքը» նացիստական գաղափարախոսության մեջ:

Ռայխի դրամատուրգ Ռ. Օյրինգերն իր «Թինգշփիլի դրույթներում» գրում է, որ «պաշտամունքը և ոչ թե «արվեստն» է թինգ հրապարակի առարկա»[1]: Այսինքն՝ թինգշփիլը ոչ թե թատրոն էր, այլ պաշտամունք, ծես: Պաշտամունքը մարդու և աստվածայինի միջև ակտիվ հարաբերության միջոց է: Այդ հարաբերությունը հաստատվում է զոհաբերության միջոցով, որը հանդես է գալիս ամենուրեք, որտեղ պաշտամունքը և կրոնական ծեսը հասնում են զարգացման որոշակի մակարդակի: Որքան ավելի հստակ են նրանք ձևավորվում, այնքան ավելի կենտրոնական դեր է դրանցում զբաղեցնում զոհը, որը կարող է հանդես գալ ամենատարբեր տեսակներով, լինել պաշտամունքային գործողության կենտրոն: Այդ կետում կրոնական հավատը ձեռք է բերում իր իրական հասունությունը և անմիջականորեն գործի է վերածվում[2]: Հետևաբար նաև թինգշփիլի մեջ զոհաբերությունը պետք է գլխավոր դերը կատարեր:

Եվ Օյրինգերն իր «Թինգշփիլի դրույթներում» գրում է այդ մասին. «Դերասանը ոչ թե գործի է դնում գլխավոր և պետական գործողությունները: Ժողովրդական գործողություններն են դառնում արարված: Արարման գործընթաց և զոհաբերության գործողություն: Իր զոհերին է նայում ազգը, իր զոհերին է մեծարում ազգը և հարգում նրանց գործողության միջոցով: Մահա-

---

[1] **Euringer Richard**, Thingspiel-Thesen I, In: **Wulf Joseph.** Theater und Film im Dritten Reich: Eine Dokumentation, Sigbert Mohn Verlag, Güntersloh 1964, S. 169.

[2] **Кассирер Эрнст,** Философия символических форм. В 3-х тт. Т. 2. М.; СПб., 2002, стр. 231-232. http://ec-dejavu.ru/s/Sacrifice.html - 28.05.2014.

ցածների պաշտամունքը թինգշփիլի առարկա է: Ընկածները ոտքի են ելնում, և քարերի միջից աղաղակում է հոգին»[3]: Թինգշփիլերի մեջ զոհաբերության նշանակությունը հասկանալու համար նպատակահարմար ենք համարում զոհաբերության գործընթացը դիտարկել ըստ Բաարենսի մոդելի, համաձայն որի՝ զոհաբերության գլխավոր տարրերն են զոհ մատուցողը, զոհաբերության առարկան, տեղը և ժամանակը, հասցեատերը, շարժառիթը և մտադրությունը[4]: Թինգշփիլերի մեջ զոհ մատուցողը և զոհաբերության առարկան գերմանացի ժողովուրդն է: Կամավոր ինքնազոհաբերությունը ենթադրում է, որ սեփական գոյությունը ստորադասվում է ավելի բարձր արժեքների, որոնք են հայրենիքը, ժողովուրդը և նրա բարօրությունը: Հիտլերի կարծիքով. «Սեփական աշխատանքով զոհաբերություն մատուցելու պատրաստակամությունը, իսկ եթե անհրաժեշտ է, նաև կյանքով՝ հանուն ուրիշների, ամենից շատ զարգացած է արիացիների մոտ: Արիացիները ոչ թե հզոր են իրենց հոգևոր արժեքներով որպես այդպիսին, այլ այդ ունակությունները հասարակությանը ծառայեցնելու պատրաստակամությամբ: Ինքնապահպանման բնազդը արիացիների մոտ ամենաազնիվ ձևն է ընդունում, քանի որ արիացին իր սեփական «եսը» ստորադասում է հասարակության կյանքին, իսկ երբ ժամը հասնում է, արիացին իրեն զոհաբերում է ընդհանուր շահին»[5]: Թինգշփիլերի զոհերն այս «բարձր արժեքի» կրողն են, ովքեր դիմում են ինքնազոհաբերության պատմության տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր իրավիճակներում, երբ նրանց առջև կյանքի և մահվան, լինել և չլինելու կամ սեփական հայացքներին և արժեքներին տեր կանգնելու խնդիր է ծառացած: Նրանք զոհաբերվում են հանուն հայրենիքի փրկության և ժողովրդի բարօրության, հանուն գաղափարի:

Առաջին համաշխարհային պատերազմի զոհերը նացիստական գաղափարախոսության տեսանկյունից ընկալվում են որպես մարդիկ, ովքեր «զոհաբերել են իրենց՝ հստակ գիտակցելով (իրենց) նպատակների մեծությունը»[6]:

---

[3] **Euringer Richard**, Thingspiel-Thesen I, In: **Wulf,** Joseph. Theater und Film im Dritten Reich, S. 168-169.

[4] **Dahm Ulrike**, Opfer, https://www.bibelwissenschaft.de/de/wibilex/das-bibellexikon/lexikon/sachwort/anzeigen/details/opfer-at-3/ch/65856f9e669583b01dccb66d4f140690/ - 01.06.2014.

[5] **Hitler Adolf**, Mein Kampf (172.-173. Auflage), Zentralverlag der N.S.D.A.P., München, 1936, S. 325-326.

[6] Նույն տեղում, էջ 781:

Նրանք զոհաբերվել են հանուն Գերմանիայի ազատության և իրենց արժեքների հաստատման:

Նման պատկերացում են ունեցել և այդ նպատակով են գիտակցված զոհաբերվել «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգշփիլի մարտում ընկածները: Երիտասարդ Գերմանիայի գնդի անդամների ձայնը լսվում է «հեռվից, լուսավոր, պարզ, հավերժ երիտասարդ». «Ով մեզ հետ չի ընկել, երբեք չի ըմբռնի: // Ով մեզ հետ չի ընկել, երբեք չի ճանաչի: // Դա երանելի բոցավառում էր»[7]:

Սակայն նրանց զոհաբերությունն արդյունք չի տվել, հանուն ինչի նրանք զոհվել են, չի իրականացել, դրա համար մահացածները տանջվում և զարմանում են. «Արդյոք դուք երջանիկ չեք ծաղկում, աշխատասեր ազգ: // Չէ՞ որ այդքան մարդ է զոհվել»[8]:

Այս հատվածն արտացոլում է Ռոզենբերգի «20-րդ դարի միֆը» աշխատության հետևյալ միտքը. «Համաշխարհային պատերազմը՝ որպես համաշխարհային հեղափոխության սկիզբ, բոլոր ոլորտներում երևան է բերում այն ողբերգական փաստը, որ չնայած միլիոնավոր մարդիկ զոհաբերել են իրենց կյանքը, այդ զոհաբերությունը չի գործել այն ուժերի օգտին, հանուն որոնց զանգվածները պատրաստ էին մահանալ: Պատերազմում զոհվածները արժեքները կորցրած աղետի ժամանակաշրջանի զոհերն են, սակայն դրան զուգահեռ նույն Գերմանիայում սկսում են հասկանալ (չնայած ոչ մեծ քանակությամբ մարդիկ), որ այդ զոհերը նոր օրվա, նոր ժամանակաշրջանի նահատակներն են»[9]: Նրա պատկերացմամբ զինվորների մահը պետք է սրբագործեր միաբանությունը և, չնայած ահավոր ներկային, պետք է տաներ դեպի փայլուն ապագա[10]:

---

[7] Jungdeutschland-Regimenter: (aus der Ferne, hell, klar, ewig jung) Wer nicht mit uns fiel, wird's nie begreifen. // Wer nicht mit uns fiel, wird's nie erkennen. // Es war ein seliges Verbrennen! **Euringer Richard,** Deutsche Passion 1933, Schriften an die Nation, Oldenburg, 1933, S. 13.

[8] Blühl ihr nicht glücklich, ein fleißig Geschlecht? // Sind soviel gefallen. Նույն տեղում, էջ 10:

[9] **Rosenberg Alfred.** Dine Wertung seelisch-geistigen Gestaltenkämpfe unserer Zeit (33.-34. Auflage), Hoheneichen – Verlag, München, 1934, S. 1.

[10] **Ketelsen Uwe-Kersten**. Heroisches Theater: Untersuchungen zur Dramentheorie des Dritten Reiches (Literatur und Wirklichkeit Band 2, hrsg. von C.O. Conrady), H. Bouvier u. CO. Verlag, Bonn, 1968, S. 123.

Հասկանալու համար, թե ինչու «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգշփիլի՝ պատերազմի մասնակիցների զոհաբերությունն իր արդյունքը չի տվել, ներկայացնենք երկու բանակների՝ «չար ոգու» և գերմանացի ժողովրդի վերաբերմունքը պատերազմի զոհերի նկատմամբ:

Չար ոգի[11]

- Հսկա՝ դիակների դաշտի վրա […]// Կանգնած եմ ես տարածած ոտքերով:

  (Riesig überm Leichenfeld […] // steh' ich mit gespreiztem Bein). (էջ 9)
- Ջախջախված և թաղված: // Սայլակով մասսայական գերեզման կրված: // Մորթված, ինչպես անասուն: // Ծեծված դժոխային մեխանիզմի կողմից: // Խելագար հայրենիքի և պարտականության համար: // Հեռու՛, մահացածները չեն ապրում:

  (Zermörsert und verscharrt. // Zerbreit ins Massengrab gekarrt. // Abgeschlachtet wie das Vieh. // Zerstrommelt von höllischer Maschienerie. // Ein Narr für Vaterland und Pflicht. // Zurück! Die Toten leben nicht). (էջ 10)
- Գլուխդ թանձր հեղուկի մեջ, լե՛շ // Ի՞նչն է քեզ, անվերջ անիմաստ խոսող հոռետեսին անհանգստացնում // Արդյոք դուք պառկած չեք փափուկ անկողնում: // Արդյոք դուք Գերմանիան չեք փրկել: // Հո՛գ տարեք ձեր գոմաղբի մասին:

Մարտում ընկածներ

- Լուսավոր, պայծառ, հավերժ երիտասարդ

  (Hell, klar, ewig jung). (էջ 13)
- Դա երանելի բոցավառում էր:

  (Es war ein seliges Verbrennen). (էջ 13)
- Մահվան մեջտեղում մենք ողջերն ենք:

  (Mitten im Tode sind wir die Lebendigen). (էջ 13)
- Այնքան իսկական եմ ես ապրում մահվան մեջտեղում:

  (So wahr ich lebe, mitten im Tod). (էջ 25)

[11] Այս հատվածի մեջբերումները հետևյալ գրքից են՝ **Euringer Richard,** Deutsche Passion 1933: Համապատասխան էջերը նշված են փակագծերի մեջ:

(Kopf in die Tunke, Radaver! // Was schert dich der Anke Palaver! // Liegt ihr nicht sanft gebettet? // Habt ihr nicht Deutschland gerettet!? // Kümmert euch um euren Dung)! (էջ 12)

- Դուք ընդամենը անասուն էիք // Անիմաստ կոտորված:

  (Ihr ward bloß das Vieh // hingeschlachtet ohne Sinn). (էջ 13)

- Այն, ինչ մահացած է, մահացած է [...]: // Մնացեք այդտեղ ներքևում, ճահիճի և գիշերվա մեջ:

  (Was tot, ist tot [...]. // Bleibt ihr da drunten in Stumpf und Nacht)! (էջ 16)

Նացիստական գաղափարախոսության տեսանկյունից զոհերը «լուսավոր, պայծառ և հավերժ երիտասարդ» են, և մահից հետո էլ նրանք «ապրում են մահվան մեջտեղում»: Ի տարբերություն դրա՝ «չար ոգին» ընդունում է զոհերի միայն ֆիզիկական գոյությունը: Այսինքն՝ այս երկու բանակների պայքարը նյութականի և հոգևորի հակադրությունն է: «Չար ոգու» խոսքը լի է արհամարհանքով, ծաղրով, վիրավորանքով և զոհաբերման արժեզրկմամբ: «Մորթված, ինչպես անասուն» արտահայտությունը բացառում է և արժեզրկում ինքնազոհաբերման պատրաստակամությունը: «Չար ոգին» ընդունում է մահացածների միայն ֆիզիկական կողմը, նրանք միայն «գոմաղբ» են և գտնվում են «ներքևում, ճահիճի» մեջ, իսկ ճահիճը լճացման, անկման և կործանման խորհրդանիշն է[12]: Եվ Գերմանիան էլ մահվան և կործանման առաջ է կանգնած, այդ պատճառով երեխաները «թզուկ են մնում», չնայած որ «նրանք խաղաղության մեջ են ծնվել»[13]: Զոհաբերության «ընդհանուր» հասկացությունը, որը կարելի է ստանալ վերացարկման միջոցով, տեսադաշտից դուրս մղելով նրա պատմական-գործնական բոլոր ձևերը, բոլոր դեպքերում ուղղված է նրան, որպեսզի կապ հաստատի «սրբազան» և «փուչ» աշխարհների միջև՝

[12] Символы и знаки: Болото. http://sigils.ru/symbols/boloto.html - 17.04.2014.

[13] Und bleiben sie Zwerge [...]: Die sind doch im Frieden geboren. **Euringer Richard**. Deutsche Passion 1933, S. 23.

որպես սրբազան կամուրջ օգտագործելով նվիրաբերումը, որը ոչնչացվում է սրբազան գործողության սկզբում: Զոհն այն կետն է, որտեղ «սրբազանը» և «փուչը» ոչ միայն հպվում են իրար, այլև անքակտելիորեն միաձուլվում են: Ամեն մաքուր ֆիզիկական բան, ամեն որևէ գործառույթ կատարող բան այդ պահից միանում են սրբազանի ոլորտին[14]: Եվ քանի որ մինչ նացիստական Գերմանիայի հաստատումը ներկայացվում է որպես անհոգի ժամանակաշրջան, բնական է, որ զոհաբերությունը չէր կարող իր արդյունքը տալ:

Օյրինգերը «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգշփիլի ցուցումներում նշում է, որ «հստակ պետք է մշակվեն մահացածների տեսարանների տափակ կյանքի տեսարանների ձայները […]: Պետք է հստակ մշակվեն մահացածների գիշերը և թշվառ առօրյան»[15]: Ի տարբերություն մահացածների՝ հեղինակը ողջերի կյանքը բնութագրում է «տափակ» և «թշվառ» որոշիչներով, հետևաբար մահացածներին վերաբերող որոշիչները պետք է դրանց հականիշները լինեն: Եթե ողջերի կյանքը «տափակ» և «թշվառ» է, ապա մահացածներինը իմաստավոր է և հարուստ: Իմաստավոր է, քանի որ նրանք զոհաբերվել են հանուն բարձր արժեքների՝ հայրենիքի փրկության և բարօրության և հարուստ, հոգևոր առումով հարուստ, քանի որ նյութականը անկարևոր է: Որոշիչների բացակայությունը առաջին հերթին մատնանշում է դրանց ինքնըստինքյան հասկանալի լինելը և բացի այդ ընթերցողի կողմից ենթադրվելով ավելի հավաստի է դառնում, քանի որ ընթերցողն ինքն է հասնում այն բացահայտմանը, որ մահացածների կյանքը իմաստավոր է ու հարուստ, և դրանով այդ պնդումն ավելի համոզիչ է դառնում:

«Գերմանիայի չարչարանքները 1933» թինգշփիլում ժողովուրդը միայնակ չի կարողանում հաղթել թշնամուն, բայց քանի որ նրանք զոհաբերվել են հանուն հայրենիքի, գալիս է այն արժեքների կրողը, հանուն որոնց ժողովուրդը զոհաբերվել էր: Նա գալիս է, քանի որ ժողովուրդն իր զոհաբերությամբ արժանացել է «փրկչի» գալստյանը, որն այդ արժեքների կրողն ու հաստատողն է:

Թինգշփիլերը ցույց են տալիս, որ գերմանացի ժողովուրդը պատմության ընթացքում պայքարել է հանուն «ճշմարտության» և «ազատության», սակայն չի կարողացել արդյունքի հասնել, քանի որ արժանի առաջնորդ չի ունեցել: Սակայն ժողովուրդն իր ինքնազոհաբերությամբ արժանացել է ֆյուրերի գալուստին: Հետևաբար թինգշփիլը նաև Հիտլերի փառաբանությունն է:

---

[14] **Кассирер Эрнст**, Философия символических форм, стр. 236-237.

[15] Նույն տեղում, էջ 7:

Այն հանդիսատեսին ցույց է տալիս ֆյուրերի կարևորությունը և այն, որ միայն առաջնորդի օգնությամբ ժողովուրդը կարող է լուծել իր առջև ծառացած խնդիրները, և միայն նրա շնորհիվ է ստեղծվում ժողովրդին արժանի Գերմանիա:

Համաձայն Օյրինգերի՝ թինգշփիլը նաև «մահացածների պաշտամունք» է: Այսինքն՝ ժողովուրդը պետք է երախտապարտ լինի և մեծարի իր զոհերին, քանի որ նրանց շնորհիվ է, որ իրենք արժանանում են ֆյուրերի գալստյանը և «լուսավոր» Գերմանիայի հաստատմանը:

Մի կողմից թինգշփիլը ցույց է տալիս ինքնազոհաբերության կարևորությունը պետության կազմավորման համար, մյուս կողմից՝ հանդիսատեսի մեջ դաստիարակում է ինքնազոհաբերության պատրաստակամություն, քանի որ դա, նացիստական գաղափարախոսության համաձայն, անհրաժեշտ է պետության պահպանման և զարգացման համար:

Թինգշփիլի միջոցով պետք է ստեղծվեր ազգային միաբանություն, իսկ ազգային միաբանության ամրապնդման համար անհրաժեշտ է ինքնազոհաբերություն, «երբ մարդիկ պատրաստ են զոհաբերել սեփական Եսի հետաքրքրությունները հասարակության շահի օգտին»[16]: Թինգշփիլը Գերմանիայի երիտասարդությանը, ինչպես նաև հանդիսատեսին սովորեցնում է. «Քո մարմինը և կյանքը քոնը չեն: Մահացի՛ր և անմահ կլինես»[17]: Յուրաքանչյուր սերունդ պետք է պատրաստ լինի իր կյանքը զոհել հաջորդների համար: Զոհաբերության միջոցով է «աստծու ազատ երկնքի տակ, աղբյուրների մոտ, աստղերի տակ զոհաբերվող ժողովուրդը կերտում իր իրավունքը և ապահովում իր պատիվը»[18]:

Ամփոփելով կարող ենք ասել, որ թինգշփիլի միջոցով հանդիսատեսին ցուցադրվում էր ինքնազոհաբերության կարևորությունը գերմանացի ժողովրդի «փրկության»: Այն է՝ Ֆյուրերի գալստյան և նացիզմի հաստատման համար, ինչպես նաև նրա մեջ դաստիարակվում էր ինքնազոհաբերման պատրաստակամությունը, որը Երրորդ Ռայխում առանցքային նշանակություն ուներ:

---

[16] **Hitler Adolf,** Mein Kampf, S. 326.

[17] Dein Leib und Leben ist nicht dein. // Stirb, und du wirst unsterblich sein! **Euringer,** Richard, Deutsche Passion 1933,
S. 35.

[18] **Euringer** Richard, Thingspiel-Thesen I, In: **Wulf Joseph.** Theater und Film im Dritten Reich, S. 169.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը Ռ. Օյրինգերի «Գերմանիայի չարչարանքները 1933» թինգշ-փիլի օրինակով ցույց է տալիս Առաջին համաշխարհային պատերազմի զոհե-րի, ինչպես նաև զոհաբերության նշանակությունը նացիստական վարչա-կարգի համար: Այն նաև պարզաբանում է, թե ինչ գործառույթ են կատարում «զոհաբերության գործողությունը» և «մահացածների պաշտամունքը» նացիս-տական գաղափարախոսության մեջ:

Բանալի բառեր **–** նացիզմ, քարոզչություն, թինգշփիլ, պաշտամունք, զոհաբերության նշանակություն, Ֆյուրեր, Երրորդ Ռայխի հաստատում:

ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ЖЕРТВ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ В ТИНГШПИЛЕ Р.ОЙРИНГЕРА “МУЧЕНИЯ ГЕРМАНИИ 1933”

ГОАР ПАНОСЯН

На примере тингшпиля Р. Ойрингера “Мучения Германии 1933” статья показывает смысл жертв Первой мировой войны, а также жертвоприношений для нацистского режима. Статья также разъясняет функцию жертвоприно-шений и “культа мертвецов” в нацистской идеологии.

Ключевые слова **-** Нацизм, пропаганда, тингшпиль, культ, смысл жерт-воприношения, фюрер, осонование Третьего рейха.

THE RECONSIDERATION OF THE VICTIMS OF THE FIRST WORLD WAR IN EURINGER’S “PASSION OF GERMANY 1933” IN THINGSPIEL

GOHAR PANOSYAN

R. Euringer in his article “Passion of Germany 1933”, making use of Thingspiel as an example, portrays the importance of the casualties of the First World War as well as the substance of sacrifice for the Nazi regime. It also clarifies the significance and magnitude of the role “the practice of sacrifice” and “worshiping of the dead” execute in the Nazi ideology.

Key words - Nazism, propaganda, Thingspiel, cult, significance of sacrifice, Fuehrer, establishment of Third Reich.